



ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Քթոյան Ա., Շիրինյան Ա., Մանուկյան Ե., Իսրայելյան Ս., Հարությունյան Մ., Սաֆարյան Ն. (2024), Քաղցր ըմպելիքների հարկման ազդեցությունը սպառողների վարքագծի և տնտեսական գործունեության վրա, *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, *Տնտեսագետ*, 2(5), 137-156, DOI: 10.52174/29538114_2024.2-137


Ներկայացվել է խմբագրություն՝ 09.07.2024 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 23.07.2024 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 18.11.2024 թ.

ԱՐՄԵՆ ՔԹՈՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-6569-1901>


ԱՆՈՒՇ ՇԻՐԻՆՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-8083-3947>

ԵԼԵՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-6977-8326>

ՍՐԲՈՒՀԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-5873-4117>

ՄԱՐԻԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի հայցորդ

 <https://orcid.org/0000-0002-5413-5424>

ՆԱՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀՊՏՀ «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն»
մագիստրոսական ծրագրի ուսանող

 <https://orcid.org/0009-0006-4373-4241>

ՔԱՂՑՐ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ

ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Քաղցր ըմպելիքների սպառման հետ կապված հիվանդությունների տնտեսական և սոցիալական բեռը զգալի է ոչ միայն առողջապահական ծախսերի առումով, այլև

կորցրած արտադրողականության և տնտեսական աճի պատճառով: Հաշվի առնելով այս համարեքստը՝ քաղցր ըմպելիքների հարկումը դիտվում է որպես հանրային առողջության քաղաքականության կարևոր գործիք, որն առաջարկվում է համաշխարհային առաջատար առողջապահական կազմակերպությունների կողմից: Ազդելով այս ըմպելիքների գնի վրա՝ հարկերը նպաստում են նվազեցնելու սպառումը, խրախուսելու սննդակարգի ավելի առողջ ընտրությունը և, ի վերջո, մեղմացնելու դրանց ընդունման հետ կապված առողջական և տնտեսական բեռը:

Սակայն միջազգային հանրությունը ոչ միանշանակ է վերաբերվում քաղցր ըմպելիքների հարկման ներդրմանը: Փաստարկների շարքում հաճախ նշվում են դրա անարդյունավետությունը, ռեգրեսիվ բնույթը, ինչպես նաև բիզնեսի և զբաղվածության վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Հոդվածում ամփոփված են քաղցր պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման՝ արտադրության և սպառման վրա ազդեցության գնահատման նպատակով տարբեր երկրների օրինակներով արված հետազոտությունների արդյունքները: Դրանք օգտակար կարող են լինել ՀՀ-ում քաղցր ըմպելիքների արտադրության և սպառման ոլորտում հարկային քաղաքականության թիրախայնության աստիճանի բարձրացման, մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից հնարավոր ռիսկերի կառավարմանն ուղղված արդյունավետ որոշումների կայացման խնդիրների լուծման համար:

Հիմնաբառեր. քաղցր ըմպելիքների հարկ, հարկման դրույքաչափ, սպառողական վարքագիծ, արտադրողների վարքագիծ

JEL: I18, Q18, L66

DOI: 10.52174/29538114_2024.2-137

Ներածություն: Ամբողջ աշխարհում շաքար պարունակող ըմպելիքների (SSB) հարկերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում պետական քաղաքականություն մշակողների համար՝ բնակչության առողջությունը բարելավելու և պետական եկամուտները մեծացնելու իրենց ներուժի համար¹:

Ամենատարբեր հետազոտություններով հիմնավորված է, որ քաղցր պարունակող ըմպելիքների կանոնավոր օգտագործումը նպաստում է մարմնի ավելորդ քաշի մեծացմանն ու ճարպակալմանը², արյան գերճնշմանը³, լյարդի ճարպակալմանը⁴, քաղցկեղի առանձին տեսակների առաջացմանը⁵: Քաղցր ըմպելիքների չարաշահումը հանգեցնում է նաև երեխաների ատամների քայքայմանը՝ դրանից բխող առողջության ու կյանքի որակի հետ կապված խնդիրներով⁶:

¹ St’u World Bank. Taxes on Sugar-Sweetened Beverages: Summary of International Evidence and Experiences. World Bank; 2020:
² St’u **Stuart B, Panico L.**, Early-childhood BMI trajectories: evidence from a prospective, nationally representative British cohort study. Nutr Diabetes. 2016;7(6):198, <https://doi.org/10.1038/nutd.2016.6>
³ St’u **Malik V. S.** and **Hu. F. B.**, 2019. Sugar-Sweetened Beverages and Cardiometabolic Health: An Update of the Evidence. Nutrients 11:1840. <https://doi:10.3390/nu11081840>
⁴ St’u **Nseir W., Nassar F.** and **Assy N.**, 2010, Soft Drinks Consumption and Non-alcoholic Fatty Liver Disease. WJG 16 (21): 2579
⁵ St’u **Chazelas E., Srour B., Desmetz E., Kesse-Guyot E., Julia C., Deschamps V., Druenes-Pecollo N., Galan P., Hercberg S., Latino-Martel P., Deschasaux M.** and **Touvier M.**, 2019, Sugary Drink Consumption and Risk of Cancer: Results from NutriNet-Santé Prospective Cohort. BMJ 365:l2408
⁶ St’u **Bleich S. N.** and **Vercammen K. A.**, 2018. The Negative Impact of Sugar-Sweetened Beverages on Children’s Health: an Update of the Literature. BMC Obesity 5:6

Քաղցր ըմպելիքների չափից դուրս մեծ ծավալներով օգտագործումը գսպելու նպատակով կիրառվող առավել արդյունավետ գործիքներից է դրանց արտադրության և սպառման հավելյալ հարկումը, ընդ որում՝ այս առաջարկության նախաձեռնողն ու գլխավոր առաջնողը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն է (ԱՀԿ)⁷:

2023 թ. սեպտեմբերի դրությամբ աշխարհի շուրջ 60 երկիր կիրառում է քաղցր ըմպելիքների հարկում⁸: Դա մեծ թվով երկրներում արձանագրել է գոհացուցիչ արդյունքներ: Այս հարկի հակառակորդներն են առևտրային կազմակերպությունները, որոնք զբաղվում են քաղցր ըմպելիքների արտադրությամբ և վաճառքով: Հարկ սահմանելու դեմ տնտեսական փաստարկը տնտեսության և զբաղվածության, ինչպես նաև փոքր բիզնեսի գործունեության վրա հնարավոր ազդեցությունն է: Ողջ աշխարհում եղել են բազմաթիվ օրինակներ, երբ ներդրվող կամ արդեն իսկ կիրառվող հարկերը նվազեցվել կամ ամբողջությամբ չեղարկվել են ուժեղ հակազդեցության պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հոդվածի նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել քաղցր պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման՝ արտադրության և սպառման վրա ազդեցության գնահատման նպատակով տարբեր երկրների օրինակներով արված հետազոտությունների արդյունքները:

Գրականության ակնարկ: Քաղցր ըմպելիքների հարկման տնտեսական և սոցիալական հետևանքների ուսումնասիրությունը ամենատարբեր երկրներում մեծ թվով հետազոտողների համար հետաքրքրության առարկա է: Ստորև ներկայացված են որոշ առանցքային աշխատանքներում ստացված հիմնական արդյունքները:

Աֆշինի, Ուոթերլենդի և այլոց հետազոտություններում ուսումնասիրվում է խմիչքի գների ու սպառման ծավալների փոփոխության կապը: Ըստ այդմ՝ գնահատականները վկայում են, որ ամենատարբեր տարածաշրջաններում ու երկրներում խմիչքների սպառման վրա նշանակալի ազդեցության համար անհրաժեշտ է գների փոփոխություն՝ առնվազն 20 տոկոսի չափով⁹:

Ուոթերլենդը, Մարչուն և այլ հեղինակներ իրենց ընդգրկուն հետազոտությունում ցույց են տալիս, որ քաղցր պարունակող ըմպելիքների գների բարձրացումը ոչ միայն նշանակալիորեն ներգործում է դրանց սպառման կրճատման վրա, այլ նաև չի հանգեցնում քաղցր ըմպելիքների էժան և ոչ պակաս կալորիական ու առողջապահական տեսանկյունից խնդրահարույց հնարավոր փոխարինիչների սպառման ծավալների ավելացմանը: Մինչդեռ, շատ

⁷ St' u World Health Organization. WHO Guideline: Sugars Intake for Adults and Children. WHO. 2015:

⁸ St' u [GFRP-UNC Tax maps combined 2023_09.pdf](https://www.globalfoodresearchprogram.org/) ([globalfoodresearchprogram.org](https://www.globalfoodresearchprogram.org/))

⁹ St' u Afshin A., Peñalvo J. L., Gobbo L. Del, Silva J., Michaelson M., O' Flaherty M., Capewell S., Spiegelman D., Danaei G. and Mozaffarian D., 2017, The Prospective Impact of Food Pricing on Improving Dietary Consumption: A Systematic Review and Meta-analysis. PLOS ONE 12: e0172277

Waterlander W. E., Jiang Y., Nghiem N., Eyles H., Wilson N. and Cleghorn C., 2019, The Effect of Food Price Changes on Consumer Purchases: A Randomised Experiment. Lancet Public Health 4:e, էջ 394–405:

երկրներում քաղցր ըմպելիքների հարկման հակառակորդները նման սպառնալիքը ներկայացնում են որպես լրացուցիչ հարկերի կիրառման հակափաստարկ¹⁰:

Հարինգթոնի, Գոյանա Դա Սիլվայի և մյուսների հետազոտություններում առանձին երկրների օրինակով ցույց է տրվում քաղցր պարունակող ըմպելիքների համար լրացուցիչ ակցիզային հարկի կիրառման արդյունավետությունը, մի կողմից՝ շաքարի սպառման ծավալների կրճատման, մյուս կողմից՝ արտադրության կառուցվածքի փոփոխման՝ հոգուտ առողջապահական տեսանկյունից ավելի նախընտրելի ըմպելիքների մասնաբաժնի ավելացման: Հատկանշական է, որ նշված աշխատանքներում նաև հերքվում է արտադրողների պարագայում նշանակալի վնասների առաջացման մասին վարկածը¹¹:

Սիլվերի հետազոտությունում ցույց է տրվում, որ քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկումը, հանգեցնելով դրանց սպառման կրճատման, միևնույն ժամանակ նպաստում է նույն արտադրողների կողմից արտադրվող՝ շաքարի պարունակության ավելի ցածր մակարդակ ունեցող կամ շաքար չպարունակող ըմպելիքների իրացման ծավալների աճին¹²:

Գերերո-Լոպեսի և այլոց հետազոտությունում թիրախավորվում է քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկման հետևանքով գործազրկության աճի մասին վարկածի ստուգումը: Մեքսիկայի օրինակով արված՝ թվային տվյալների վիճակագրական վերլուծությունն ի ցույց է դնում, որ գործազրկության վրա լրացուցիչ հարկերի ներմուծման ազդեցությունը ոչ նշանակալի է կարճաժամկետ հատվածում, իսկ միջնաժամկետ հատվածում այն ուղեկցվում է նույնիսկ գործազրկության նվազմամբ¹³:

Փաուելի և մյուսների հետազոտությունում հիմնավորվում է, որ քաղցր ըմպելիքների վրա լրացուցիչ հարկերի ներդրման պարագայում արտադրող ընկերություններում զբաղվածության որոշակի նվազումը լիարժեքորեն փոխհատուցվում է այլ ոլորտներում զբաղվածության ավելացմամբ¹⁴:

Ընդհանուր առմամբ, դիտարկված հետազոտական աղբյուրներում ստացված արդյունքների ընդհանրացումն ի ցույց է դնում քաղցր պարունակող

¹⁰ St' u **Waterlander W. E., Mhurchu C. N., Steenhuis I. H. M.**, Effects of a price increase on purchases of sugar sweetened beverages. Results from a randomized controlled trial // *Appetite*. 2014. No. 78, էջ 32–39:

¹¹ St' u **Scarborough P., Adhikari V., Harrington R.A.**, Impact of the announcement and implementation of the UK Soft Drinks Industry Levy on sugar content, price, product size and number of available soft drinks in the UK, 2015–19: A controlled interrupted time series analysis. *PLoS Med* 2020; 17(2): e1003025

Goiana-da-Silva F., Nunes A. M., Miraldo M., Bento A., Breda J. and Araújo F. F., 2018a. Using Pricing Policies to Promote Public Health: The Sugar Sweetened Beverages Taxation Experience in Portugal. *Acta Med Port* 31 (4), էջ191–195:

¹² St' u **Silver L.**, Berkeley Evaluation of Soda Tax Project. City of Berkeley, Public Health Institute NCDHub, 2017,

https://journals.plos.org/plosmedicine/article?id=10.1371/journal.pmed.1002283&fbclid=IwAR0A2sXzhOBmttNVjEFDs1Yr4M6o5YHlbusZd10oZqWa5A9d5sEGOO_BiKw

¹³ St' u **Guerrero-López C.M, Molina M., Colchero M.Z.**, Employment changes associated with the introduction of taxes on sugar-sweetened beverages and nonessential energy-dense food in Mexico. *Preventive Medicine*, 2017;105(Suppl): S43–S49:

¹⁴ St' u **Powell L.M, Wada R., Persky J.J, Chaloupka F.J.**, Employment impact of sugar-sweetened beverage taxes. *Am J Public Health*, 2014;104(4), էջ 672–677:

ըմպելիքների լրացուցիչ հարկման և սպառողական ու արտադրողների վարքագծի միջև նշանակալի կապի առկայությունը: Ընդ որում, արտադրության և, ընդհանրապես, տնտեսության վրա քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկման բացասական ազդեցության մասին պնդումները ավելի հերքվել են, քան գտել վիճակագրական հաստատում:

Հետազոտության մեթոդաբանություն: Հոդվածի մեթոդաբանական հենքը կազմում են քաղցր պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման՝ սպառողների և արտադրողների վարքագծի վրա ազդեցության վերլուծության, տնտեսական և սոցիալական հետևանքների գնահատման՝ միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքներն ու կատեգորիաները: Մեթոդների շարքում օգտագործվել են քանակական և որակական գնահատման, պարամետրական և ոչ պարամետրական մեթոդները: Ի հավելումն՝ կիրառվել են նաև վիճակագրական տվյալների համակարգային վերլուծության, խմբավորման, ընդհանրացման մեթոդները:

Հետազոտության շրջանակներում որպես թիրախային են դիտարկվել առանձին երկրներում քաղցր ըմպելիքների հարկման տնտեսական ու սոցիալական արդյունքները բնութագրող ցուցիչները, ինչպես նաև սպառողների ու արտադրողների համապատասխան վարքագծի փոփոխման միտումները նկարագրող բնութագրիչները:

Ուսումնասիրության տեղեկատվական հիմքը կազմել են քաղցր պարունակող ըմպելիքների հարկման արդյունքների գնահատմանն առնչվող արտերկրի հեղինակների հետազոտությունները, ԱՀԿ, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կառույցների ու առանձին երկրների վիճակագրական հրապարակումները և ուսումնասիրությունները:

Ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ ուղղություններով.

- հարկերի ընդգրկման շրջանակը՝ ըստ երկրների և տարածաշրջանների, ընդ որում, ուսումնասիրվել է SSB հարկատեսակ կիրառող երկրների կամ տարածաշրջանների շուրջ 80 տոկոսի փորձը,
- SSB հարկատեսակները, հարկման բազայի որոշման մոտեցումները, դրույքաչափերը,
- հարկման ենթակա ապրանքատեսակները,
- հարկման ազդեցությունը կազմակերպությունների գործունեության արդյունքների վրա,
- հարկման ազդեցությունը նախապես սահմանված թիրախային նպատակների (առաջին հերթին՝ առողջապահական) կենսագործման վրա,
- հարկման ազդեցությունը սպառողների վարքագծի վրա,
- հարկման ազդեցությունը կազմակերպությունների վարքագծի՝ ապրանքային տեսականու փոփոխության, արտադրանքում շաքարի պարունակության փոփոխության վրա:

Կատարվել է նաև դիտարկվող երկրներում և տարածքային միավորներում շաքար պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման՝ գնի վրա ազդեցության ուսումնասիրություն և դրանց սպառման գնային առաձգականության վերլուծություն: Ըստ այդմ՝ դիտարկվել է, թե տարբեր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, շաքար պարունակող ըմպելիքների գնի միավոր կամ մեկ տոկոսային կետով բարձրացումը սպառման քանի տոկոսային կետով փոփոխության է

հանգեցրել: Հավելենք, որ մեր երկրում ուսումնասիրությունը հիմնված է կիս-ամյակային տվյալների վրա (հունվարից հունիս և հուլիսից դեկտեմբեր), իսկ որպես հետազոտվող ժամանակաշրջան դիտարկվել են 2010–2024 թթ.:

Հայաստանում քաղցր ըմպելիքների պահանջարկի գնային առաձգականությունը գնահատելու համար կիրառվել է բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության գործիքակազմը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գների փոփոխությունը սպառողական վարքագծի վրա կարող է ազդել ոչ թե նույն պահին, այլ որոշակի ժամանակահատվածում, վերլուծության մեջ հաշվի է առնվել նաև, այսպես կոչված, ժամանակի լագը: Ըստ այդմ՝ կառուցվել է ավտոռեգրեսիվ բաշխման լագի (Autoregressive Distributed Lag-ARDL) մոդել, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու ժամանակային շարքի տարբեր փոփոխականների միջև առկա կարճաժամկետ և երկարաժամկետ հարաբերությունները: Այս մոդելի նպատակահարմարությունը պայմանավորված է նրանով, որ այն կիրառելի է ոչ ստացիոնար ժամանակային շարքերի համար՝ անկախ ինտեգրման կարգից: ARDL մոդելում ենթադրվում է, որ բացատրվող փոփոխականը պայմանավորված է ոչ միայն իր սեփական լագերով, այլ նաև բացատրող փոփոխականով և վերջինիս լագերով:

Մոդելի ունի հետևյալ ընդհանուր տեսքը.

$$y_t = \alpha + \beta_1 y_{t-1} + \dots + \beta_p y_{t-p} + \alpha_0 x_t + \alpha_1 x_{t-1} + \dots + \alpha_q x_{t-q} + v_t,$$

որտեղ՝ y_t -ն քաղցր ըմպելիքների սպառման աճի տեմպն է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, x_t -ն՝ քաղցր ըմպելիքների ՍԳԻ-ն, v_t -ն՝ սխալի չափը, իսկ p -ն և q -ն, համապատասխանաբար՝ կախյալ և անկախ փոփոխականների լագերը:

Նշենք, որ վերջիններիս գնահատման համար որպես հիմք է ընդունվել Ակայկեի տեղեկատվական չափանիշը: Ըստ այդմ՝ կախյալ փոփոխականի օպտիմալ լագերի թիվը սահմանվել է 3, իսկ անկախ փոփոխականի դեպքում՝ 2: Բոլոր փոփոխականները ենթարկվել են լոգարիթմական ձևափոխման:

Վերլուծություն: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) **քաղցր ըմպելիքը** սահմանում է որպես ազատ շաքար պարունակող ցանկացած խմիչք, ինչպիսիք են գազավորված և չգազավորված զովացուցիչ ըմպելիքները, մրգային կամ բանջարեղենային հյութերը և ըմպելիքները, հեղուկ կամ փոշենման հիմք ունեցող խտանյութերը, համավորված ջուրը, էներգետիկ և սպորտային ըմպելիքները, պատրաստի խմելու թեյն ու սուրճը և մրգային հյութի խտանյութը:

ԱՀԿ և միջազգային առողջապահական այլ կազմակերպությունների մոտեցմամբ՝ քաղցր ըմպելիքների հարկման հիմնական նպատակները կենտրոնացած են հանրային առողջության և տնտեսական օգուտների շուրջ: Ըստ այդմ՝ SSB-ների հարկման հիմնական նպատակների շրջանակը ներառում է.

1. նվազեցնել շաքար պարունակող ըմպելիքների օգտագործումը,
2. ստեղծել եկամուտ հանրային առողջության ծրագրերի համար,
3. խրախուսել ապրանքների վերափոխումը,
4. վերացնել առողջապահական անհավասարությունը,
5. բարձրացնել առողջության ռիսկերի մասին իրազեկվածությունը:

Նկարագրված նպատակների արդյունավետ թիրախավորումը, ըստ առողջապահական տարբեր կազմակերպությունների, հնարավոր է SSB հարկման հստակ մեթոդների կիրառմամբ: ԱՀԿ-ն, օրինակ, խորհուրդ է տալիս քաղցր ըմպելիքները հարկել որպես ծախսարդյունավետ և ապացույցների վրա հիմնված քաղաքականության թարմացված ցանկի մաս՝ համաձայն ԱՀԿ 2013–2030 թվականների ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման գլոբալ գործողությունների պլանի (WHO Global Action Plan for the Prevention and Control of NCDs 2013–2030)¹⁵: Դրանք ներկայացնում են «3 շահումների» ռազմավարություն. շահում է հանրային առողջությունը, շահում են կառավարության եկամուտները, շահում է առողջապահական հավասարությունը:

ԱՀԿ-ն մշակել է ձեռնարկ քաղցր ըմպելիքների հարկման քաղաքականության վերաբերյալ՝ առողջ սննդակարգը խթանելու համար: Ինչպես ընդգծված է ձեռնարկում, հարկերը ներկայումս կիրառվում են՝ օգտագործելով մի շարք նախագծեր, որոնք, իրենց հերթին, ունեն տարբեր հետևանքներ իրենց արդյունավետության վրա՝ սպառումը նվազեցնելու համար: Հաշվի առնելով նման տարասեռությունը, ստանդարտացված ցուցիչներ են պահանջվում՝ համեմատելու քաղցր ըմպելիքների հարկերը և դրանց մակարդակները տարբեր երկրներում:

Ըստ առաջարկվող մեթոդաբանության՝ քաղցր ըմպելիքների համար կիրառվող հատուկ ակցիզային հարկերը կարող են հիմնված լինել ծավալի կամ շաքարի պարունակության վրա: *Ծավալի վրա հիմնված* ակցիզային հարկերը կարող են ավելի պարզ կիրառվել, քան շաքարավազի վրա հիմնվածները՝ դառնալով արդյունավետ միջոց եկամուտների ավելացման համար: Ներկայումս ամբողջ աշխարհում գործող քաղցր ըմպելիքների ակցիզային հարկերի գրեթե կեսը (46 տոկոս) հիմնված է ծավալի վրա: *Շաքարի պարունակության վրա հիմնված* հարկերը նախընտրելի են արդյունավետության տեսանկյունից, քանի որ դրանք ուղղված են հիմնական բաղադրիչին (շաքարին), որն առաջացնում է քաղցր ըմպելիքների սպառման հետ կապված բացասական ներքին և արտաքին գործոններ: Դրանք կարող են խրախուսել սպառողներին՝ անցնելու ավելի առողջ (քիչ շաքարով) փոխարինիչների, միաժամանակ արտադրողներին խրախուսելով վերափոխել իրենց արտադրանքը (շաքարի պարունակությունը նվազեցնելով)՝ խուսափելով բարձր հարկային դրույքաչափերից:

Հաջորդ *տարբերակված* կամ հիբրիդային կոչվող տեսակը ներառում է վերոնշյալ երկու հարկատեսակների միավորումը. 2019 թվականի կեսերից ուժի մեջ են ութ երկրում՝ Բրունեյում, Էստոնիայում, Իռլանդիայում, Մալայզիայում, Պորտուգալիայում, Թաիլանդում, Միացյալ Թագավորությունում և Իսպանիայի Կատալոնիա տարածաշրջանում:

Հարկ է արձանագրել, որ միջազգային հանրությունը միանշանակ չի վերաբերվում քաղցր ըմպելիքների հարկման ներդրմանը: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ում, որոշ եվրոպական և ասիական երկրներում նման հարկ բավականին երկար ժամանակ գոյություն ունի տարբեր պատճառներով. մի դեպքում

¹⁵ Տե՛ս World Health Organization (2011) Global action plan for the prevention and control of noncommunicable diseases 2013–2020. <https://apps.who.int/iris/handle/10665/94384>

այն դիտարկվում է որպես բյուջեի համալրման լրացուցիչ աղբյուր, իսկ մյուս դեպքում՝ որպես կարգավորիչ, որով կարելի է սահմանափակել անառողջ մթերքների, այս դեպքում՝ ըմպելիքների մեջ շաքարի օգտագործումը:

Քաղցր պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման հիմնական հակառակորդները առևտրային կազմակերպություններն են, որոնք զբաղվում են քաղցր ըմպելիքների արտադրությամբ և վաճառքով: Հարկ սահմանելու դեմ նրանց փաստարկը տնտեսության և զբաղվածության, ինչպես նաև փոքր բիզնեսի գործունեության վրա հնարավոր բացասական ազդեցությունն է: Փաստարկների շարքում հաճախ նշվում է նաև դրանց անարդյունավետությունը, ռեգրեսիվ բնույթը, անօրինական առևտրի խթանումը և այլն: Ուստի վերլուծական մեծ հետաքրքրություն է ներկայացնում քաղցր ըմպելիքների հարկման ազդեցության ուսումնասիրությունը սպառողական վարքագծի, բիզնեսի, զբաղվածության և արտադրողականության վրա:

Ընդհանուր առմամբ, ավելի բարձր հարկերը (օրինակ՝ Ֆիլադելֆիայում և Սաուդյան Արաբիայում) համընկնում են վաճառքի ավելի մեծ անկման հետ: Սպառողների վարքագծի վրա սննդամթերքի գների փոփոխությունների ազդեցության վերաբերյալ հետազոտությունները փաստում են, որ խմիչքների լայն շրջանակի համար անհրաժեշտ են գների առնվազն 20 տոկոսով բարձրացումներ՝ սպառողների վարքագիծը արդյունավետ փոխելու համար^{16,17}:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղցր ըմպելիքների հարկերի ներդրումը տարբեր կերպ է ազդում առանձին սոցիալ-տնտեսական խմբերի գնումների ծավալի վրա: Այսպես՝ Մեքսիկայում քաղցր ըմպելիքների գների փոփոխության նկատմամբ ավելի զգայուն են եղել ցածր եկամուտ ունեցող խմբերը¹⁸, մինչդեռ Չիլիում՝ բարձր եկամուտ ունեցողները¹⁹:

Կան դիտարկումներ, ըստ որոնց, կարճաժամկետ հեռանկարում քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկմամբ պայմանավորված գների բարձրացումը կարող է ավելի մեծ բեռ դնել ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների վրա, որոնք իրենց եկամտի ավելի մեծ մասն են ծախսում այդ ըմպելիքների վրա: Սակայն ակնկալվում ու նաև տարբեր երկրների փորձն է վկայում, որ երկարաժամկետ հեռանկարում նման հարկերից ամենամեծ առողջապահական օգուտները կքաղեն ցածր եկամուտ ունեցող սպառողները, որոնց մոտ անհամաչափորեն բարձր է սննդակարգով պայմանավորված գիրության և ոչ վարակիչ հիվանդությունների հետ կապված առողջապահական ծախսերի բեռը: Քաղցր ըմպելիքների սպառման կրճատումը և դրանց հետ կապված հիվանդությունների տարածվածության նվազեցումը կհանգեցնեն բնակչու-

¹⁶ Տե՛ս Afshin A., Peñalvo J. L., Del Gobbo L., Silva J., Michaelson M., O'Flaherty M., Capewell S., Spiegelman D., Danaei G. and Mozaffarian D., 2017. The Prospective Impact of Food Pricing on Improving Dietary Consumption: A Systematic Review and Meta-analysis. PLOS ONE 12: e0172277

¹⁷ Տե՛ս Waterlander W. E., Jiang Y., Nghiem N., Eyles H., Wilson N. and Cleghorn C., 2019. The Effect of Food Price Changes on Consumer Purchases: A Randomised Experiment. Lancet Public Health 4:e էջ 394–405:

¹⁸ Տե՛ս Colchero M. A., Molina M. and Guerrero-López C. M., 2017. After Mexico Implemented a Tax, Purchases of Sugar-Sweetened Beverages Decreased and Water Increased: Difference by Place of Residence, Household Composition, and Income Level. J Nutr. 147 (8): 1552–7

¹⁹ Տե՛ս Nakamura R., Mirelman A. J., Cuadrado C., Silva-Illanes N., Dunstan J. and Suhrcke M., 2018. Evaluating the 2014 Sugar-Sweetened Beverage Tax in Chile: An Observational Study in Urban Areas. PLoS Medicine 15 (7): e1002596xxx.

թյան առողջապահական ծախսերի նվազմանը և աշխատունակ կյանքի տարիների աճի արդյունքում եկամուտների ավելացմանը²⁰:

Քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկման հակառակորդների փաստարկներից մեկն էլ այն է, որ սպառողների սննդակարգում արդեն իսկ կայուն տեղ զբաղեցնող ըմպելիքների գնի բարձրացումը նրանց դրդում է սպառման կառուցվածքի փոփոխության գնալ՝ գնի բարձրացում արձանագրած ըմպելիքները փոխարինելով դրանց ավելի էժան, բայց ոչ պակաս կալորիական նմանօրինակներով: Այս ենթադրությունը ստուգելու նպատակով հոլանդացի հետազոտողները 2014 թ. իրականացրել են պատահական վերահսկվող փորձ՝ կիրառելով երկու պայման. փորձարարական՝ քաղցր ըմպելիքների վրա 19 տոկոս հարկման դեպքը, և վերահսկող՝ ընթացիկ գների դեպքը (6 տոկոս հարկ): Փորձի արդյունքները ցույց են տվել, որ գների բարձրացման դեպքում մասնակիցները 10–13 տոկոսով քիչ քաղցր ըմպելիքներ են գնել, քան մինչև գների բարձրացումը: Միևնույն ժամանակ, այլ կատեգորիայի խմիչքների գնման վրա էական ազդեցություն չի բացահայտվել, ինչը թույլ է տվել եզրակացնել, որ քաղցր ըմպելիքների գների բարձրացումը արդյունավետ է եղել դրանց գնումների կրճատման տեսանկյունից և բացասական հակազդեցություններ չի ունեցել՝ նմանատիպ ապրանքներով փոխարինման առումով²¹:

Մի շարք երկրներում քաղցր ըմպելիքների լրացուցիչ հարկմանը սպառողների արձագանքը հանգում է նաև միջսահմանային գնումների ավելացմանը: Միջսահմանային գնումների ծավալը և դրա ազդեցությունը նման հարկերի արդյունավետության վրա կախված է մի շարք գործոններից, ներառյալ՝ աշխարհագրությունը, տեղական սպառողների կողմից պահանջարկի գնային առաձգականությունը, տեղական մանրածախ շուկայի մրցունակությունը և նույնիսկ այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասարակական տրանսպորտի ցանցը, մանրածախ առևտրի օբյեկտների խտությունն ու գտնվելու վայրը ինչպես հարկային իրավասության ներսում, այնպես էլ հարևան տարածքներում²²:


Հայաստանում քաղցր ըմպելիքների սպառման քանակական գնահատականները ստանալու համար օգտագործվել են դրանց իրացման և ներմուծման ծավալները, իսկ որպես գնային փոփոխության ցուցանիշ՝ ոչ ալկոհոլային խմիչքների սպառողական գների ինդեքսը:

Գծապատկեր 1-ում պատկերված է Հայաստանում իրացված քաղցր ըմպելիքների շարժընթացը, որն արտահայտում է աստիճանական աճի միտում: Գծապատկերը նաև ի ցույց է դնում քաղցր ըմպելիքների իրացման սեզոնային տատանումները, ընդ որում, յուրաքանչյուր տարվա երկրորդ կիսամյակի իրացման ծավալները մշտապես գերազանցում են առաջին կիսամյակի ցուցանիշները: Այս օրինաչափությունը կարելի է բացատրել տարվա երկրորդ կեսի տաք եղանակով:

²⁰ St'ya *Всемирный банк. Воздействие налога на сахаросодержащие напитки на здоровье населения и распределение ресурсов в Казахстане. Ноябрь, 2019:*


²¹ St'ya *Waterlander W. E., Mhurchu C. N., Steenhuis I. H. M., Effects of a price increase on purchases of sugar sweetened beverages. Results from a randomized controlled trial // Appetite. 2014. No. 78, էջ 32–39:*

²² St'ya *Cawley J., Frisvold D., Hill A. and Jones D.. 2020. Oakland's Sugar-Sweetened Beverage Tax: Impacts on Prices, Purchases and Consumption by Adults and Children. Economics and Human Biology 37:100865*



Գծապատկեր 1. Քաղցր ըմպելիքների իրացումը՝ համապատասխան տարվա ընթացիկ գներով 2010–2024 թթ. (մլրդ. դրամ)²³

Քաղցր ըմպելիքների ներմուծման դինամիկան ներկայացված է գծապատկեր 2-ում: Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում քաղցր ըմպելիքների ներմուծումը, ընդհանուր առմամբ, աճել է՝ դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում գրեթե կրկնապատկվելով:




Գծապատկեր 2. Քաղցր ըմպելիքների ներմուծումը 2010–2024 թթ. (մլրդ. դրամ)²⁴

Քաղցր ըմպելիքների ընդհանուր սպառումը հաշվարկելու համար գումարվել են իրացման և ներմուծման ծավալները: Գծապատկեր 3-ից կարելի նկատել ՀՀ-ում քաղցր ըմպելիքների սպառման աճի սպառնացող վտանգը: Այստեղ ևս ակնառու է սեզոնային օրինաչափություն՝ սպառման ավելի բարձր մակարդակ տարվա երկրորդ կիսամյակում:


²³ Աղբյուրը՝ Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները՝ ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման: [Հրատարակումներ ըստ տարիների / ՀՀ ՎԿ \(armstat.am\)](http://armstat.am).

²⁴ Աղբյուրը՝ Արտաքին առևտրի տվյալների բազա՝ ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման: [Արտաքին առևտրի տվյալների բազա / ՀՀ ՎԿ \(armstat.am\)](http://armstat.am).



Գծապատկեր 3. Քաղցր ըմպելիքների սպառումը 2010–2024 թթ. (մլրդ. դրամ)²⁵

Գծապատկեր 4-ում պատկերված է ոչ ալկոհոլային խմիչքների սպառողական գների ինդեքսի դինամիկան, որը վկայում է, որ դիտարկվող տարիներին Հայաստանում, ընդհանուր առմամբ, գրանցվել է չափավոր գնաճ՝ որոշակի տատանումներով:



Գծապատկեր 4. Ոչ ալկոհոլային խմիչքների սպառողական գների ինդեքսը 2010–2024 թթ. (%)²⁶

Հայաստանում քաղցր ըմպելիքների պահանջարկի գնային առաձգականությունը գնահատելու համար կիրառվել է բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության գործիքակազմը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

²⁵ Հաշվարկվել է որպես իրացման և ներմուծման գումար:

²⁶ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, <https://armstat.am/am/>

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքները

Կախյալ փոփոխական՝ y				
R ² =0.78				
	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	t չափանիշ	p-արժեք
Հաստատուն	3.127	0.854	3.663	0.002
x	0.210	0.671	0.314	0.757
lag(y)1	0.906	0.197	4.603	0.000
lag(y)2	-0.678	0.224	-3.033	0.007
lag(y)3	0.065	0.189	0.343	0.735
lag(x)1	0.916	1.265	0.724	0.478
lag(x)2	-1.095	0.709	-2.487	0.022

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում քաղցր ըմպելիքների սպառման աճի տեմպը դրականորեն է կապված lag(y)1 և lag(y)2 փոփոխականների հետ, իսկ lag(y)3-ի հետ ունի հակադարձ կախվածություն: Սա, ըստ երևույթին, վկայում է վառ արտահայտված սեզոնայնության առկայության մասին: Միևնույն ժամանակ, կարելի է նկատել, որ lag(x)1 փոփոխականի հետ կապը դրական, բայց ոչ նշանակալի է (p-արժեք=0.478), իսկ lag(x)2 փոփոխականի հետ՝ հակադարձ և նշանակալի: Ուստի, կարելի է եզրակացնել, որ քաղցր ըմպելիքների գների 1 տոկոսով աճը 2 ժամանակաշրջան հետո, այսինքն՝ մեկ տարի անց, հանգեցնում է դրա սպառման ծավալների գրեթե նույնչափ՝ 1.09 տոկոսով նվազման: lag(x)2-ն արտացոլում է սպառողական վարքագծի ուշացած արձագանքը գների փոփոխություններին:

Քաղցր պարունակող ըմպելիքների լրացուցիչ հարկման ներդրման արդյունքում դրանց նկատմամբ պահանջարկի նվազումը որոշակիորեն փոխհատուցվում է այլ փաթեթավորված ըմպելիքների, մասնավորապես՝ դիետիկ ըմպելիքների²⁷ և շալցված ջրի նկատմամբ պահանջարկի աճով՝ պայմանավորված սպառողների կողմից դրանց փոխարինմամբ այն ըմպելիքներով, որոնք չեն հարկվում: Շատ երկրներում քաղցր ըմպելիքներ արտադրող նույն ընկերություններն արտադրում են նաև շալցված ջուր և դիետիկ ըմպելիքներ: Ուստի, այդ ընկերությունների կողմից արտադրված փաթեթավորված ըմպելիքների պահանջարկի անկումը, ամենայն հավանականությամբ, փոքր կլինի²⁸: Բացի այդ, ընկերությունները կարող են արձագանքել (և այդպես էլ անում են) սպառողների պահանջարկի փոփոխություններին՝ վերաձևելով ապրանքները, թարմացնելով արտադրանքի տեսականին և հարմարեցնելով շուկայավարման ռազմավարությունները:

Այսպես՝ Մեծ Բրիտանիայում 2018 թ. ներմուծվեց, այսպես կոչված, «Ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրության հարկ»: Այն երկմակարդակ է. 100

²⁷ Քաղցր ըմպելիքների ցածր կալորիականությամբ տարբերակները, որոնք օգտագործում են զրոյական կամ ցածր կալորիականությամբ քաղցրացուցիչներ (օրինակ՝ սապարտամ, սուկրալոզ, սախարին, ստևիա) բարձր կալորիականությամբ քաղցրացուցիչների փոխարեն (օրինակ՝ շաքարավազ և ֆրուկտոզայի մեծ պարունակությամբ եգիպտացորենի օշարակ): Կոչվում են նաև արիեստականորեն քաղցրացված ըմպելիքներ և ոչ սննդաբար քաղցր ըմպելիքներ:

²⁸ St'u **Duckett S. and Swerissen H.**, A sugary drinks tax: Recovering the community costs of obesity. Melbourne, Australia: Grattan Institute, 2016, <https://grattan.edu.au/wpcontent/uploads/2016/11/880-A-sugary-drinks-tax.pdf>

մլ ըմպելիքի հաշվով 8 գ և ավելի շաքար պարունակող ըմպելիքների դեպքում կիրառվում է յուրաքանչյուր լիտրի հաշվով 0.24 ֆունտ ստեռլինգի, իսկ 5–8 գ պարունակության դեպքում՝ 0.18 ֆունտ ստեռլինգի չափով հարկ: Հարկատեսակի ներմուծմանը հաջորդող տարում Մեծ Բրիտանիայում նշանակալիորեն փոխվեց քաղցր ըմպելիքների բաղադրությունը. դրանցում էապես կրճատվեց շաքարի պարունակությունը՝

- ընդհանուր առմամբ, այդ ըմպելիքներում (հարկվող և չհարկվող) շաքարի օգտագործումը նվազեց տարեկան 45 հազար տոննայի չափով,
- 100 մլ-ի հաշվով 5 գ և ավելի շաքարի պարունակությամբ (հարկման նվազագույն շեմը գերազանցող) ըմպելիքների մասնաբաժինը կրճատվեց երեք անգամ՝ հասնելով մինչև 15 տոկոսի,
- հարկվող ըմպելիքներում շաքարի պարունակությունը կրճատվեց շուրջ 44 տոկոսով,
- չնայած ըմպելիքներում շաքարի պարունակության կրճատմանը, այնուհանդերձ դրանց վաճառքի ընդհանուր ծավալը չնվազեց²⁹:

Պորտուգալիայում 2017 թ. ներմուծվեց նոր ակցիզային հարկ, որը գանձվում է շաքարով և այլ քաղցրացուցիչներով ըմպելիքների պարագայում: Այն ևս երկմակարդակ է. 1 լ-ի հաշվով 80 գրամից պակաս շաքար պարունակող ըմպելիքների դեպքում կիրառվում է 8.22 եվրո, իսկ 1 լ-ի հաշվով 80 գրամ և ավելի շաքար պարունակող ըմպելիքների դեպքում՝ 16.46 եվրո հարկ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարկատեսակի ներմուծման արդյունքում շուրջ 50 տոկոսով կրճատվեց շաքարի բարձր պարունակությամբ ըմպելիքների սպառումը: Մասնագետների գնահատմամբ սա կարելի է վերագրել ըմպելիքների վերաձևմանը, որի արդյունքում դրանք հայտնվեցին շաքարի ցածր պարունակությամբ ըմպելիքների խմբում: Որպես հետևանք՝ ըմպելիքներում շաքարի օգտագործումը նվազեց 15 տոկոսով³⁰:

2018 թ. ապրիլին Հարավային Աֆրիկյան ևս սահմանեց նման հարկ՝ «Առողջության խթանման գանձում»՝ 0.021 ռենդ (մոտ 0.15 ԱՄՆ ցենտ) յուրաքանչյուր գրամ շաքարի համար՝ 4 գ/100 մլ սկզբնական շեմից: Հետազոտությունները ցույց են տվել, որ արդյունքում շատ ընկերություններ վերաձևեցին իրենց արտադրանքը՝ դրանում շաքարի պարունակությունը դարձնելով 4 գ-ից պակաս: Բացի այդ, դրանք հիմնավորում են այն փաստարկը, որ շաքարի պարունակության յուրաքանչյուր գրամի դիմաց հարկումը (հարկման բազմամակարդակ մոդելների փոխարեն, ինչպիսին, օրինակ, Միացյալ Թագավորությունում է) կարող է բավարար լինել շաքարի պարունակության զգալի փոփոխությունների խթանման համար³¹:

²⁹ St' u **Scarborough P., Adhikari V., Harrington R.A.**, Impact of the announcement and implementation of the UK Soft Drinks Industry Levy on sugar content, price, product size and number of available soft drinks in the UK, 2015-19: A controlled interrupted time series analysis. *PLoS Med* 2020; 17(2): e1003025

³⁰ St' u **Goiana-da-Silva F., Nunes A. M., Miraldo M., Bento A., Breda J. and Araújo F. F.**, 2018a. Using Pricing Policies to Promote Public Health: The Sugar Sweetened Beverages Taxation Experience in Portugal. *Acta Med Port* 31 (4), էջ 191–195:

³¹ St' u **Stacey N., Mudara C., Ng S. W., van Walbeek C., Hofman K., Edoka I.**, 2019. Sugar-based beverage taxes and beverage prices: Evidence from South Africa's Health Promotion Levy. *Social Science & Medicine* 238: 112465

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ քաղցր ըմպելիքների հարկումը, առողջապահական խնդիրների լուծմանը նպաստելով, ճիշտ կիրառության դեպքում կարող է նաև չվնասել այդ ըմպելիքներն արտադրող ընկերություններին:

Քաղցր ըմպելիքների հարկի ազդեցությունը այլ ճյուղերի, այդ թվում՝ հումքային արդյունաբերության (մասնավորապես՝ շաքարեղեգի, շաքարի ճակնդեղի արտադրության), տրանսպորտի և ծառայությունների վրա, կախված է տարբեր տնտեսություններում դրանց առանձնահատկություններից: Այսպես՝ Բրազիլիայում քաղցր ըմպելիքների հարկման մակրոտնտեսական և ոլորտային ազդեցությունների վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ քաղցր ըմպելիքների արտադրության ոլորտը միջոլորտային թույլ հարաբերություններ ունի և չի համարվում տնտեսության առանցքային ոլորտ: Քաղցր ըմպելիքների հարկերի կիրառման պատճառով արտադրության ծախսերի 10 տոկոս հիպոթետիկ աճի մոդելավորման արդյունքում կանխատեսվել է նվազագույն կամ գրեթե զրոյական բացասական ազդեցություն տնտեսության վրա՝ 4 տոկոս անկում քաղցր ըմպելիքների արտադրության ոլորտում և 0.02 տոկոս անկում ընդհանուր տնտեսական արդյունքի մեջ³²:

Ավստրալիայում քաղցր ըմպելիքների ակցիզային հարկի (0.40 ավստրալիական դոլար 100 գրամ շաքարի համար) մոդելավորման արդյունքում բացահայտվել է նվազագույն ազդեցություն երկրի շաքարի արտադրության վրա: Ավստրալիայում արտադրվող շաքարի մոտավորապես 75–80 տոկոսն արտահանվում է որպես հումք: Հարկի ներդրման արդյունքում կանխատեսվել է մանրածախ գների 20 տոկոս աճ և սպառման 15 տոկոս նվազում, ինչը կհանգեցնի շաքարի ներքին պահանջարկի կրճատման մոտավորապես 50 հազ. տոննայով (Ավստրալիայում արտադրվող ամբողջ շաքարի 1 տոկոսը): Շաքարավազը, որը նախկինում վաճառվել է ներքին քաղցր ըմպելիքներ արտադրողներին, պետք է վերակողմնորոշվի դեպի արտահանում: Ամենայն հավանականությամբ, արտահանման նոր շուկաներ գտնելու համար կարող են պահանջվել լրացուցիչ ծախսեր, հատկապես այն ընկերությունների դեպքում, որոնք իրենց ողջ արտադրանքը վաճառում էին ներքին շուկայում, ինչը սկզբնական շրջանում կարելի է փոխհատուցել՝ կառավարության աջակցության փոքր փաթեթ տրամադրելով³³:

Զբաղվածության վրա քաղցր ըմպելիքների հարկման հնարավոր ազդեցությունների վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում չեն փաստում խմիչքների արտադրության կամ մանրածախ առևտրի ոլորտում աշխատատեղերի կրճատման մասին: Ընդհակառակը՝ դրանք վկայում են զբաղվածության աճի մասին:

Աբստրակայում հարկերի (մոտ 10 տոկոս) ներդրումից երկու տարի անց իրականացված վերլուծությունը որևէ ազդեցություն չբացահայտեց խմիչքների արտադրության ոլորտում զբաղվածության վրա: Հարկի կիրառմանը հաջորդող առաջին 12 ամիսների ընթացքում առևտրային (մանրածախ) խանութներում գրանցվել է զբաղվածության փոքր, բայց վիճակագրորեն նշանակալի

³² Տե՛ս **Balbinotto G.** and **Cardoso L.**, Measuring the economic impact of SSB taxes in Brazil: An input-output analysis. *Value in Health*, 2016; 19(3): A101

³³ Տե՛ս **Duckett S.** and **Swerissen H.**, A sugary drinks tax: Recovering the community costs of obesity. Melbourne, Australia: Grattan Institute, 2016. Accessed 8 Feb 2020, 880-A-sugary-drinks-tax.pdf (grattan.edu.au)

աճ (ամսական միջինում 0.3 տոկոս) և առաջին երեք տարիների ընթացքում գործազրկության փոքր, բայց վիճակագրորեն նշանակալի նվազում (ամսական միջինում 2 տոկոս)³⁴:

Նմանապես՝ 2017 թ. հունվարին Ֆիլադելֆիայում ներդրված քաղցր և դիետիկ ըմպելիքների ակցիզային հարկը (1.5 ցենտ 1 ունցիայի հաշվով) առաջին 14 ամիսների ընթացքում չհանգեցրեց ամսական գործազրկության մակարդակի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունների ինչպես հարկի ազդեցության հավանական ոլորտներում՝ մանրածախ առևտուր, ոչ ակտիվային խմիչքների արտադրություն, այնպես էլ տնտեսության մյուս ճյուղերում³⁵:

Բրազիլիայում քաղցր ըմպելիքների հիպոթետիկ 10 տոկոսանոց հարկի մոդելավորման արդյունքում կանխատեսվել է շուրջ 15000 աշխատատեղերի կորուստ, որոնց մոտ մեկ քառորդը (23%)՝ քաղցր ըմպելիքների արտադրության ոլորտում³⁶: Սակայն այս ուսումնասիրությունը հաշվի չի առնում այլ ոլորտներում զբաղվածության հնարավոր աճը՝ պայմանավորված սպառողական ծախսերի վերաբաշխմամբ և նոր հարկից ստացվող եկամուտների հաշվին պետական ծախսերի ավելացմամբ:

Եզրակացություն: Այսպիսով՝ ոլորտում առկա հետազոտությունները թույլ են տալիս փաստելու, որ լավ մշակման և ճիշտ կիրառության դեպքում քաղցր ըմպելիքների հարկումը հանգեցնում է դրանց մանրածախ գների աճի և հարկվող ըմպելիքների վաճառքի ու գնման ծավալների նվազման: Միևնույն ժամանակ, դրանք հերքում են այդ հարկատեսակի հակառակորդների փաստարկներն առ այն, որ այդ ըմպելիքների պահանջարկի նվազումը կվնասի բիզնեսին, կհանգեցնի աշխատատեղերի կրճատման և կդանդաղեցնի տնտեսական աճի տեմպերը՝ վկայելով քաղցր ըմպելիքների հարկման զուտ դրական տնտեսական ազդեցության, ներառյալ՝ զբաղվածության և արտադրողականության ընդհանուր աճի մասին:

Ընդհանուր առմամբ, քաղցր ըմպելիքների հարկման արդյունավետ համակարգի գործարկումն ապահովվում է հետևյալ 4 առանցքային մեխանիզմների փոխլրացնող ազդեցությամբ.

1. մանրածախ գների աճ,
2. հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում,
3. ոչ գնային արձագանքի (օրինակ՝ ապրանքի վերաձևում) խթանում,
4. հավելյալ բյուջետային եկամուտների գեներացում, որոնք կարող են ուղղվել հանրային բարեկեցության բարելավման ծրագրերի իրականացմանը:

Ըստ այդմ՝ առողջության բարելավմանն արդյունավետ կերպով նպաստելու համար քաղցր ըմպելիքների հարկումը կարելի է դիտարկել հետևյալ հինգ

³⁴ St'u **Guerrero-López C.M., Molina M., Colchero M.Z.**, Employment changes associated with the introduction of taxes on sugar-sweetened beverages and nonessential energy-dense food in Mexico. *Preventive Medicine*, 2017;105(Suppl): S43-S49:

³⁵ St'u **Lawman H.G., Bleich S.N., Yan J., LeVasseur M.T, Mitra N., Roberto C.A.** (2019). Unemployment claims in Philadelphia one year after implementation of the sweetened beverage tax. *PLoS ONE*, 2019;14(3): e0213218

³⁶ St'u **Balbinotto G. and Cardoso L.**, Measuring the economic impact of SSB taxes in Brazil: An input-output analysis. *Value in Health*, 2016; 19(3): A101

- քայլից բաղկացած ներգործության տրամաբանության մեջ.
- հարկ սահմանելը պետք է բարձրացնի թիրախային ապրանքի գինը,
 - գնի բարձրացումը պետք է հանգեցնի ապրանքի սպառման կրճատմանը,
 - ապրանքի սպառման կրճատումը պետք է հանգեցնի շաքարի ընդունման կրճատմանը,
 - շաքարի ընդունման կրճատումը պետք է հանգեցնի ավելի առողջ սննդակարգի ընտրությանը,
 - ավելի առողջ սննդակարգի ընտրությունը պետք է բարելավի առողջությունը և մեղմի դրա հետ կապված տնտեսական բեռը:

Օգտագործված գրականություն

1. Afshin, A., J. L. Peñalvo, L. Del Gobbo, J. Silva, M. Michaelson, M. O’Flaherty, S. Capewell, D. Spiegelman, G. Danaei, and D. Mozaffarian. 2017. “The Prospective Impact of Food Pricing on Improving Dietary Consumption: A Systematic Review and Meta-analysis”. PLOS ONE 12: e0172277
2. Alsukait, R. 2020. Evaluating Saudi Arabia’s Sugar Sweetened Beverage Tax: A Mixed Methods Approach. Doctoral Dissertation, Tufts University. January 2020
3. Alvarado, M., N. Unwin, S. J. Sharp, I. Hambelton, M. M. Murphy, T. A. Samuels, M. Suhrcke, and J. Adams. 2019. “Assessing the Impact of the Barbados Sugar- Sweetened Beverage Tax on Beverage Sales: An Observational Study.” International Journal of Behavioural Nutrition and Physical Activity 16 (1): 1–13
4. Balbinotto G and Cardoso L. Measuring the economic impact of SSB taxes in Brazil: An input-output analysis. Value in Health, 2016; 19(3): A101
5. Bandy, L., V. Adhikari, S. Jebb, and M. Rayner. 2019. “The Use of Commercial Food Purchase Data for Public Health Nutrition Research: A Systematic Review.” PLOS ONE 14(1): e0210192
6. Bleich, S. N., and K. A. Vercammen. 2018. “The Negative Impact of Sugar-Sweetened Beverages on Children’s Health: an Update of the Literature.” BMC Obesity 5:6
7. Cawley, J., D. Frisvold, A. Hill, and D. Jones. 2020. “Oakland’s Sugar-Sweetened Beverage Tax: Impacts on Prices, Purchases and Consumption by Adults and Children.” Economics and Human Biology 37:100865
8. Chazelas, E., B. Srouf, E. Desmetz, E. Kesse-Guyot, C. Julia, V. Deschamps, N. Druésne-Pecollo, P. Galan, S. Hercberg, P. Latino-Martel, M. Deschasaux, and M. Touvier, 2019. “Sugar- sweetened beverages Consumption and Risk of Cancer: Results from NutriNet-Santé Prospective Cohort.” BMJ 365:l2408
9. Colchero, M. A., M. Molina, and C. M. Guerrero-López. 2017. “After Mexico Implemented a Tax, Purchases of Sugar-Sweetened Beverages Decreased and Water Increased: Difference by Place of Residence, Household Composition, and Income Level.” J Nutr. 147 (8): 1552–7

10. Duckett S and Swerissen H. A sugar- sweetened beverages tax: Recovering the community costs of obesity. Melbourne, Australia: Grattan Institute, 2016.
<https://grattan.edu.au/wpcontent/uploads/2016/11/880-A-sugary-drinks-tax.pdf>
11. Falbe, J., H. R. Thompson, C. M. Becker, N. Rojas, C. E. McCulloch, and K. A. Madsen. 2016. "Impact of the Berkeley Excise Tax on Sugar Sweetened Beverage Consumption." *Am J Pub Health* 106 (10): 1865–1871
12. Goiana-da-Silva, F., A. M. Nunes, M. Miraldo, A. Bento, J. Breda, and F. F. Araújo. 2018a. "Using Pricing Policies to Promote Public Health: The Sugar Sweetened Beverages Taxation Experience in Portugal." *Acta Med Port* 31 (4): 191–195
13. Guerrero-López CM, Molina M, Colchero MZ. Employment changes associated with the introduction of taxes on sugar-sweetened beverages and nonessential energy-dense food in Mexico. *Preventive Medicine*, 2017;105(Suppl): S43-S49
14. Lawman HG, Bleich SN, Yan J, LeVasseur MT, Mitra N, Roberto CA (2019) Unemployment claims in Philadelphia one year after implementation of the sweetened beverage tax. *PLoS ONE*, 2019;14(3): e0213218
15. Malik, V. S., and F. B. Hu. 2019. "Sugar-Sweetened Beverages and Cardiometabolic Health: An Update of the Evidence." *Nutrients* 11:1840. DOI: 10.3390/nu11081840
16. Nakamura, R., A. J. Mirelman, C. Cuadrado, N. Silva-Illanes, J. Dunstan, and M. Suhrcke. 2018. "Evaluating the 2014 Sugar-Sweetened Beverage Tax in Chile: An Observational Study in Urban Areas." *PLoS Medicine* 15 (7): e1002596xxx
17. Nseir, W., F. Nassar, and N. Assy. 2010. "Soft Drinks Consumption and Non-alcoholic Fatty Liver Disease." *WJG* 16 (21): 2579
18. Powell LM, Wada R, Persky JJ, Chaloupka FJ. Employment impact of sugar-sweetened beverage taxes. *Am J Public Health*, 2014; 104(4):672–7
19. Public Health England. Sugar Reduction: Report on Progress between 2015 and 2019. London, United Kingdom: Public Health England. September 2019.
[Sugar_reduction_yr2_progress_report.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/421117/Sugar_reduction_yr2_progress_report.pdf) ([publishing.service.gov.uk](https://www.publishing.service.gov.uk))
20. Roberto, C. A., H. G. Lawman, M. T. LeVasseur, N. Mitra, A. Peterhans, B. Herring, and S. N. Bleich. 2019. "Association of a Beverage Tax on Sugar-Sweetened and Artificially Sweetened Beverages With Changes in Beverage Prices and Sales at Chain Retailers in a Large Urban Setting." *JAMA* 321:1799–1810
21. Scarborough P., Adhikari V., Harrington RA. Impact of the announcement and implementation of the UK Soft Drinks Industry Levy on sugar content, price, product size and number of available soft drinks in the UK, 2015-19: A controlled interrupted time series analysis. *PLoS Med* 2020; 17(2): e1003025

22. Silver, L. D., S. W. Ng, S. Ryan-Ibarra, L. S. Taillie, M. Induni, D. R. Miles, J. M. Poti, and B. M. Popkin. 2017 “Changes in Prices, Sales, Consumer Spending, and Beverage Consumption One Year after a Tax on Sugar-Sweetened Beverages in Berkeley, California, US: A Before-and-After Study.” *PLoS Medicine* 14 (4): e1002283
23. Silver L. Berkeley Evaluation of Soda Tax Project. City of Berkeley, Public Health Institute NCDHub, 2017
https://journals.plos.org/plosmedicine/article?id=10.1371/journal.pmed.1002283&fbclid=IwAR0A2sXzhOBmttNVjEFDs1Yr4M6o5YHlbusZd10oZqWa5A9d5sEGOO_BiKw
24. Stacey, N., C. Mudara, S. W. Ng, C. van Walbeek, K. Hofman, I. Edeka. 2019. Sugar-based beverage taxes and beverage prices: Evidence from South Africa’s Health Promotion Levy. *Social Science & Medicine* 238: 112465
25. Stuart B, Panico L. Early-childhood BMI trajectories: evidence from a prospective, nationally representative British cohort study. *Nutr Diabetes*. 2016;7(6):198. <https://doi.org/10.1038/nutd.2016.6>
26. Vall Castelló, J., G. Lopez Casasnovas. 2020. “Impact of SSB taxes on sales”. *Economics and Human Biology* 36: 100821
27. Waterlander, W. E., Y. Jiang, N. Nghiem, H. Eyles, N. Wilson, and C. Cleghorn. 2019. “The Effect of Food Price Changes on Consumer Purchases: A Randomised Experiment.” *Lancet Public Health* 4:e394–405.
28. World Bank. Taxes on Sugar-Sweetened Beverages: Summary of International Evidence and Experiences. World Bank; 2020
29. World Health Organization. WHO Guideline: Sugars Intake for Adults and Children. WHO. 2015.
30. Всемирный банк. Воздействие налога на сахаросодержащие напитки на здоровье населения и распределение ресурсов в Казахстане. Ноябрь 2019.

АРМЕН КТОЯН

*Звездующий кафедрой статистики АГЭУ,
кандидат экономических наук*

АНУШ ШИРИНЯН

*Доцент кафедры статистики АГЭУ,
кандидат экономических наук*

ЕЛЕНА МАНУКЯН

*Доцент кафедры экономико-математических
методов АГЭУ, кандидат экономических наук*

СРБУИ ИСРАЕЛЯН

*Преподаватель кафедры финансов АГЭУ,
кандидат экономических наук*

МАРИАМ АРУТЮНЯН

Соискатель кафедры менеджмента АГЭУ

НАНЕ САФАРЯН

*Студент магистерской программы
«Прикладная статистика и наука о данных» АГЭУ*

Влияние налогообложения сладких напитков на потребительское поведение и экономическую деятельность. – Экономическое и социальное бремя болезней, связанных с потреблением сладких напитков, является значительным не только с точки зрения затрат на здравоохранение, но и с точки зрения потери производительности и экономического роста. В этом контексте налогообложение сладких напитков становится важным инструментом политики общественного здравоохранения, рекомендованным ведущими мировыми организациями здравоохранения. Влияя на цену этих напитков, налоги направлены на сокращение потребления, поощрение выбора более здорового питания и, в конечном итоге, на облегчение бремени для здоровья и экономики, связанного с их потреблением.

Однако международное сообщество неоднозначно относится к введению налогообложения сладких напитков. Аргументы часто указывают на их неэффективность, регрессивный характер и потенциальное негативное влияние на бизнес и занятость.

В статье обобщены результаты исследований, проведенных на примере разных стран с целью оценки влияния дополнительного налогообложения подслащенных напитков на производство и потребление. Они могут быть полезны для повышения адресности налоговой политики в сфере производства и потребления сладких напитков в РА, для решения задач эффективного принятия решений, направленных на управление возможными рисками с точки зрения развития человеческого капитала.

Ключевые слова: *налог на сладкие напитки, ставка налога, поведение потребителей, поведение производителей*

JEL: I18, Q18, L66

DOI: 10.52174/29538114_2024.2-137

ARMEN KTOYAN

*Head of the Chair of Statistics at
ASUE, PhD in Economics*

ANUSH SHIRINYAN

*Associate Professor of the Chair of Statistics at
ASUE, PhD in Economics*

ELENA MANUKYAN

*Associate Professor of the Chair of Methods in Economics at
ASUE, PhD in Economics*

SRBUHI ISRAELYAN

*Lecturer of the Chair of Finance at
ASUE, PhD in Economics*

MARIAM HARUTYUNYAN

Researcher at the Chair of Management at ASUE

NANE SAFARYAN

MA Student of the Chair of Applied Statistics and Data Science at ASUE

The Impact of Taxation of Sugar-Sweetened Beverages on Consumer Behavior and Economic Activity.

The economic and social burden of disease associated with sugar-sweetened beverages consumption is significant, not only in terms of health care costs, but also in lost productivity and economic growth. In this context, the taxation of sugar-sweetened beverages is emerging as an important public health policy tool recommended by leading global health organizations. By affecting the price of these beverages, taxes aim to reduce consumption, encourage healthier dietary choices, and ultimately alleviate the health and economic burden associated with their consumption.

However, the international community is ambiguous about the introduction of taxation of sugar-sweetened beverages. Arguments often point to their ineffectiveness, regressive nature and potential negative impact on business and employment.

The paper summarizes the results of research conducted with the examples of different countries in order to assess the effect of additional taxation of sugar-sweetened beverages on production and consumption. They can be useful for increasing the targeting of tax policy in the field of production and consumption of sweet drinks in RA, for solving the problems of effective decision-making aimed at managing possible risks from the perspective of human capital development.

Keywords: *tax on sugar-sweetened beverages, tax rate, consumer behavior, producer behavior*

JEL: I18, Q18, L66

DOI: 10.52174/29538114_2024.2-137